

աշակերտաց քիւր 16,689 հոգի է եղեր. 1828ին եղեր է 25,582, իսկ հիմա 67,792 է : Թէ՛ նախնական եւ քէ՛ երկրորդական դպրոցաց աշակերտները միատեղ առնելով, բոլորը կըլլայ 95,558 հոգի : Այս ալ կայ որ Փարիզու դպրոցներուն աշակերտաց շատաւուն մէկ պատճառն ալ օտար երկիրներէ եւ դրսի գաւառներէն եկողներն են :



ՀՈՌԱՄԵԼԱԿԱՆ ԵԳԻՍՏՈՂՈՍԱՆ ՈՄԱՆՆ ԳԱՐՄՈՒՆԻԲԵ
ԸՆԴԴԻՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՄԱՆՆ :

Իզճի ազատութեան վրայ քանի մը րան ըսել խոստացեր էինք. յուսանք քէ՛ այն խոստումներս մօտեւ կըլկատարենք : Առ այժմ մեր ընթերցողաց մտադրութեանը արժանի կընամարինք այն ատենախօսութիւնն որ Եւրոպայի մեծամեծ համալսարաններէն մէկուն՝ այսինքն Պրիւքսէլի համալսարանին անուանի վարժապետներէն Պարոն Վէրնակն անուելով մէկը ըրեր է համալսարանին բացուելու հանդիսին օրը :

Այն ատենախօսութեան միտքը լաւ հասկընալու համար գիտնալու է որ ինչպէս Գաղղիոյ՝ նոյնպէս ալ Պրիւքսիոյ մէջ տեղ տեղ շատ մը հոռով-մական առաջնորդներ մօտ տարիներս կարգէ դուռն քաջութեամբ կամ համարձակութեամբ մը սկսած են խօսիլ ընդդէմ ամէն տեսակ ազատամտութեան, եւ մասնաւորապէս ընդդէմ ազատաշխատութեան յուսմունս գիտութեանք . բայց ճշմարիտն ըսելով, այս իրենց պարտականութիւնն առնուած պաշտօնինն ոչ քէ՛ այնու անտարանական հեղուքեան եւ քաղցրութեան ոգւովն ու ոճովը կը կատարեն, (որ նոյն իսկ քաղցրութեամբը կընանսի « մինչեւ ցորոշումն շերտն եւ հոգւոյ եւ ուղղոյ եւ յօդի » ինչպէս որ կըսէ սուրբ Առաքեալը), այլ անսովոր խստութեամբ, արժամաքանօք ու բըշնամովրան հոգւով : Այս պարտաւելի ոճոյն մասնաւոր գործիք ու՝ օրինակ եղած է Փարիզու *Ինքիլէս* լրագիրը, որ բեպտ շատ կուսակիցներ ունի ոչ միայն ի Հոռմ՝ այլեւ ի Գաղղիա եւ ուրիշ տեղանք, բայց բշնամիները շատ աւելի են, եւ օրէ օր աւելնալու վրայ են՝ նոյն իսկ Իտալիոյ ու Գաղղիոյ մէջ :

Արդ այս *Ինքիլէս* լրագրոյն ոգւովը կոնդակներ հաներ էին անցածները Պրիւքսիոյ Կանա եւ Պրիւք քաղաքներուն նախկուպետները ընդդէմ Լիւիճի ու Կանաի համալսարանաց ազատական վարդապետութեանը յիմաստասիրական խնդիրս : Մենք քեպտ մանրամասն տեղեկութեամբ չենք կրնար

ստուգել այն կոնդակներուն մէջ եղած ամբաստանութեանց ինչ աստիճանի՝ ճիշդ ըլլալը, սակայն խնդրոյն իսկութեանը եւ անոնց ոճոյն նայելով, կըցաւինք որ աւելի առիթ կուտան այսպիսի վեճերով կրօնը եւ կրօնական խնդիրները ատելի ընելու մարդկանց, եւ մասնաւոր ազգասէր աշխարհականաց, քան քէ՛ պատկառելի եւ սիրելի :

Մեզի երեւցաւ քէ՛ այն ատենախօսութեան մէջ շատ րան կայ՝ ուսկից մեր ազգն ալ կրնայ ոչ սակաւ խեղճ տոլրիլ եւ կամ խրատ առնուլ . մասնաւոր երբոր միտքը ըրեր քանի մը տարիէ ի վեր Պոլսոյ մէջ անցած դիպուածներն ու եղած խօսակցութիւնները . ուստի Պարոն Վէրնակնի ճառին գլխաւոր մասերը կըղենեք հոս բարձրանօրէն .

« Պարոններ,

« Մտքերնիս դրած էինք որ այս տարի՝ որ մեր ճեմարանին հաստատուելուն քսանուիրեքերորդ տարին է՝ ուսմանց դասախօսութիւնը սկսելու ատեն պիտի կարենանք մեր աշխատութեանց, մեր յաջողութեանց, մեր յոյսերուն վրայ տեղեկութիւն մը տալ ձեզի :

« Ինչպէս կուրախանայինք որ պիտի ըսենք ձեզի քէ՛ Պրիւքսէլի ազատ համալսարանը օրէ օր առաջ երբեք ու՝ մեծնալու վրայ է, եւ քէ՛ աշակերտներուն քիւր կանոնաւոր կերպով ու շուտ շուտ անելու հետ է, այնպէս որ 1855ին ի վեր 157 աշակերտ աւելի ունինք ... եւ քէ՛ բովանդակ գաւառը, նախանք եւ տէրութիւնը՝ որ նամիշպէս եւ ուղղակի ականատես վկայ են մեր աշխատութեանց, մեր ծառայութեան յարգը մեծապէս կը ճանընան, եւ տարուէ տարի կանւցընեն վրանիս ունեցած սեր ու համարումնին . եւ քէ՛ մեկ տարուան մէջ մեր վարժապետներն երեքը եւ մեր ատենադպիրը այնպիսի վարձատրութիւն մը ընդունեցան բազաւորներ որ վարձապետական պաշտօնն ունեցողներուն քիչ անգամ կը տրուի . եւ քէ՛ այս սիրով՝ այս համարման եւ այս յառաջադիմութեան երեք պատճառ կայ . մէկն է մեր սովորեցուցած նիւթերուն բարձրութիւնը, որով ընկերական կենաց ուսումնական ու բարոյական ամեն պիտոյիցն ալ օգտակար են . մէկալը մեր վարժապետաց քաջութիւնը՝ որ գիտութեանց յառաջադիմութեանը հետ մէկտեղ կ'աճի կըմեծնայ . եւ երրորդը՝ մեր աշակերտաց բարի վարքը, որ իրենց ուսման ատեն եւ ուսմանէն ետեւ մեծ սեր կըցուցընեն ճշմարտութեան, բարեկարգութեան եւ հայրենեաց վրայ :

« Մտքերնիս դրեր էինք որ ասանկով լմընցրեկինք այս մեր աշխատութիւնը. չէինք գիտեր որ ուրիշ գրադմունք կայ նոյն առջեւնիս : Անենք որդորեան եւ նախանձու գեւր մեզի դէմ ելեր է. բերանը բշնամանօք եւ սխալը ատելութեամբ լցուած՝ զմեզ աւրուած մարդիկ կանուանէ :

« Կրթամբաս. զմեզ որ իբր բէ « մեշերնիս խօսք « դրեր ենք որ երբ կարելի է՝ կրօնական յա- « ուշադիմութիւնը խափանենք, պատանաաց « առջեւ անազին ջարեաց աղբիւր մը բանաւք, « ջուրս դին րոյն բափենք, ամբարշտութեան « դուռը բանաւք, ծածուկ ու գաղտնորոգայր « ընկերութեան մը գործիքներն ըլլանք : »

« Կարգիլէ հարց եւ մարց որ չըլլայ բէ իրենց գաւկըները մեզի յանձնեն, խղճմտանքները կը- շիտէր ու կըլմխցընէ, ընտանեաց մեշ կոխ կըձգէ, բոլոր մեր երկրին խաղաղութիւնը տակն ու վրայ ընկու միտք ունի :

« Բասն վից տարի կայ, Պարոններ, մեք կար- ձեինք բէ անենորդորեան կատաղութիւնը իշու- ցինք : Այն ատենները հոռվմական եկեղեցական- ները ձեռքերնիս կըբօրվին ու կըսէին մեզի հետ . Այսուհետեւ բաժանմունք պիտի չըլլայ. ամեն կար- ձիք ազատ պիտի ըլլայ, ամեն կրօն ազատ պիտի ըլլայ, տպագրութիւնն ու ուսումնական կըբու- րիւնը ազատ պիտի ըլլան : Արդեօք ինչ կընշա- նակին այն ատենի մտերմական ու ազատական խօսքերը :

« Ի՞նչ պիտի եշանակին. փոխադարձ երու- դութեան մը միշմիկ գրաւական էին. գիտնական մարդկանց ու եկեղեցական անձանց մեշ՝ օգտա- կար եւ հաստատրիմ նախանձաւորութեամբ աշ- խատելու միշմիկ խօստմունք էին. կատարեալ ու հաստատուն հաւանութիւն էին փիլիսոփայի մը այն խօսքին որ կըսէ. « Միայն գործելոյ եւ խոր- « նելոյ ազատութիւնն է որ կարող է մեծամեծ « բաներ յառաջ բերել. այն ազատութիւնն ալ « գիտութեան լուսովը պայծառանալու միայն « կարօտ է՝ որպէս զի ծայրայեղ վնասներէն « ապահով մնայ : »

« Այն ատենն որ հոռվմական եկեղեցական- ները այս կերպով կըցուցընէին մեզի իրենց խա- ղադասիրութիւնն ու միարանասիրութիւնը, բո- լոր երկիրն ալ ծափաձայն գովութեամբ կընաւեր անոնց ըրածին. 1851ին Սահմանադրութիւնն ալ վրայ գալով՝ ազգային կամաց կեիքը կոխեց այն մեծամեծ սկզբանց վրայ որ եկեղեցականք մեզի հետ միկտեղ հռչակեր էին, եւ այն միարանութեան

վրայ որով մեր գործը ոյժ եւ նաստատութիւն պիտի ընդունէր :

« Ամեն մարդ կրլուսար ուրախութեամբ բէ օր պիտի ըլլայ որ գիտութիւնն ու աստուածագաշտու- րիւնը միարան պիտի աշխատէ մարդկային ազգիս երջանկութեանը նամար :

« Անմիտ յոյս, Պարոններ. վրան նազիւ բէ տարի մը անցեր էր, կարօթիկութեան գլուխը (այս- ինքն պապը), գլուխ մը որ ոչ մեր երկրէն է. ոչ մեր սովորութիւններն ունի եւ ոչ մեր քաղաքա- կըբութիւնը գիտէ, քաղաքական քննիչ պաշտօնը ձեռք առաւ, ու Պեճիոյ Սահմանադրութեանը դէմ այն 1852ին աւաղելի կոնդակը հանց որ ու- ղիշ պարտքեր կըղեն եկեղեցականաց վրայ, եւ կըբուրադատէ զանոնք որ մեզի հետ միկտեղ կան- զնած շէնքերնիւ քանդեն կործանեն :

« Սահմանադրութիւնը ազատութիւն կըբարոզէ խղճի եւ կրօնից. կոնդակը պատասխան կուտայ բէ « այդ ազատութիւնը սուտ, այլանդակ ու ան- « ճոռնի սկզբունք մըն է : »

« Սահմանադրութիւնը ազատութիւն կուտայ տպագրութեան. պապական կոնդակը կըպատաս- խանէ բէ « այդ ազատութիւնը ամենավնասակար « բան է, եւ որքափ ալ զգուի ու զգուշանայ միկը « անկեղի՝ քիչ է : »

« Սահմանադրութիւնը ազատութիւն կուտայ ընկերակցութիւններ ընկու. պապական կոնդակը կըպատասխանէ բէ « այդ ազատութիւնը սուրբ « Արօրոյն նամար նոր նոր դառնութեան ու ան- « հանգստութեան պատճառ է : »

« Մէկ խօսքով, 1852ին կոնդակը կէտ առ կէտ կըղատապարտէ. 1851ին Սահմանադրութեան այն ամենայն սկզբունքներն որ ուրիշներէն տուի պիտանի, ճշմարիտ, եւ տեւութեան հանգստու- րեանն ու յաջողութեանը համար հարկաւոր են :

« Այն ատենն հոռվմական եկեղեցականները որ Հոլանտացոց տեւութեան անենորդորեանն ազատկնուն վրայ վերջի աստիճանի գոն եւ ու- րախ կին՝ հարկադրեցան երկու քաղաքականու- րեանց մէկն ընտրելու, այս ինքն կամ իրենց եր- կրիւնը եւ կամ Հոռմիւնը : Եպիսկոպոսներուն այն երկուքին որն ընտրելիքը տարակոյս չէր վերցը- ներ. Պեճիացի ըլլալին միկոյի դրին, եւ այնու- հետեւ խեղքերնի մտքերնիս այս միայն եղաւ որ յիտախաղաց ճամբայ մը բռնեն. այնպիսի ճամ- քայ մը որ երբ յաջողի՝ Հոռվմայ տեւութեան եր- կիրներուն ազատամտութիւնը, ապահովու-

բիւնը, հարստութիւնն ու երջանկութիւնը պիտի պարգեւէ մեզի :

« Առեւտով *կարծիք* ըսածդ մէջտեղէն վերցընելու համար՝ կարծեաց *տէրերը* կը վերցընէին . դուք ալ գիտէք որ Ինտովկենտիոս Գ պապին գաւազանը, Փիլիպպոս Բ քաղաւորին կացինը եւ Կարոլոս Թ քաղաւորին հրացանը այն առնելի բայց սուրբ կարծուած գործողութեան շատ յարմար գործիքներ էին : Այսօրուան օրս իմաստասիրութիւնը, եւ այն խղճմտանքն որ իմաստասիրութեան ուժովը զօրացաւ հակառակ պապերուն եւ արխեմուշտ քաղաւորաց ջանքին, անյադրելի կերպով կեցած՝ այնպիսի եղեռնական հնարքները կարգիլէն ու կը դատապարտեն, այնպէս որ յետսամտաց համար երկու ճար միայն մնացած է . մէկը՝ ամեն բան հնձող ժամանակը, եւ միւսը սերմ ցանող ուսումը : Հոովմեական եկեղեցականները այս երկուքին վրայ ալ մեծ յոյս ունեցան :

« Ժամանակը արդէն շատ այնպիսի գլուխներ հնձեց որ Պեշխոյ ազատամտութեան պատիւ ու հաստատութիւն էին : Ողջունենք զանոնք ու անցնինք, եւ մաղբենք որ զակրկները իրենց հարցը նմանին . մաղբենք որ այսուհետեւ եկողները միաբան ըլլան, վասն զի ոյժ ըսածդ՝ աւելի միաբանութեան վրայ է քան բէ բազմութեան վրայ :

« Ուսումը արդէն շատ վարուցան ըրաւ, եւ յետսամտութեան այս օգնականը շատ քշանմաներ հանեց ազատութեան եւ իմաստասիրութեան : Եպիսկոպոսները այս բանիս համար օգնութիւն խնդրեցին, եւ իրենց ուզածին ալ աւելին ձեռք ձգեցին :

« 1852ին հրատարակուած կոնդակին պատճառած ապշութիւնը հազիւ բէ դադրեր էր, երկրին բոլոր եպիսկոպոսներն ալ խօսք մէկ ըրած՝ հաստատեցին առաջ Մալին եւ յետոյ Լուվին (կամ Լուվանիոն) քաղաքին մէջ մեծ Համալսարան մը որուն արձակ համարձակ *կամուրջի* պատուանդանն ալ տուին : Ասիկայ իրենց մէկ իրաւունքն էր որ Սամանաղրութենէն առեր էին :

« Հոն ուզածնուն պէս սովորեցուցին բէ խըղճմտանքի եւ կրօնից ազատութիւնը սուտ, այլանդակ ու անճոռնի սկզբունք մըն է . տպագրութեան ազատութիւնը ամենապիտանակար ու զարդելի բուն է . ընկերութիւններ կազմելու ազատութիւնը՝ սուրբ Աթոռոյն դառնութիւն պատճառող ու ան-

հանգստութիւն տուող բան մըն է . այս ըսելու իրաւունքն ալ ունեին :

« Հոն ուզածնուն պէս կրցան պատմութիւնը խարդախել, ու Մոնֆրոի, Փիլիպպոս երկրորդի ու Ալպիի դքսին պէս մարդկանց յախտեան չըլտկուելու առունները շտկեցին :

« Կրցան ուզածնուն պէս կտրտել ձգել բժշկական, բնագիտական եւ բարոյական գիտութեանց ուսումնքը . այս ալ իրենց իրաւունքն էր :

« Կրցան ամեն բանի մէջ ալ հաւատքը ընեղութենէ վեր դնել, եւ յայտնութիւնը ամեն ուսումնական ճշմարտութենէ վեր . այս ալ իրենց իրաւունքն էր :

« Բայց մենք ալ մեր իրաւունքն ունեինք, եւ ազատասէր կարծեօք՝ այն տեսակ ուսման մեր հայրենեաց ապագային ինչ վնասներ հասցընելիքը իրաւամբ մտմտալով, հիմնեցինք Պրիւքսելի ազատ համալսարանը : հիմնեցինք զայն, ոչ երբ մեր հարց հաւատքին դէմ եւ հոովմեական եկեղեցւոյ վարդապետութեանցը դէմ կոուրտելու համար, հապա բող չտալու որ գիտութիւնը, ազատութիւնն ու քաղաքակրթութիւնը խղղուին այնպիսի յետսամտ դասախօսութեան մը ճտեկներուն տակն որ պապին կոնդակը Սամանաղրութենէն վեր, եկեղեցին ալ տէրութենէն վեր կուզէ դնել :

« Արդեօք յանցմանք էր ըրածնիս . հոս է բանը . ընենեք տեսնեք հանդարտութեամբ :

« Ո՛ր եւ իցի մարդկային ընկերութեան մէջ երկու կարգ գորութիւն կայ . բարոյական գորութիւններ եւ նիւթական գորութիւններ :

« Բարոյական գորութիւնները, այսինքն գիտութիւն, արուեստ, կրօն, դաստիարակութիւն եւ ուսումն՝ մարդուս հոգեկան բնութեանը համար են, եւ անոր յառաջադիմութեանը պիտի օգնեն . մէյմէկ գործիք են քաղաքակրթութեան : Բայց կը պատահի երբեմն որ իրենց նպատակին չեն հասնիր եւ հարստութեան հրապուրանքին կըլիաբուին : Այնուհետեւ անդարձութեան մը մէջ կիլնան, որովհետեւ բարոյական կենդանութիւնն ինչ կորսնցուցած են

« Պրիւքսելի Համալսարանը այն բարոյական գորութեանց մէկն է : Քսանուերկու տարի հազիւ կայ որ սկսեր է բանիլ, եւ սակայն կրնանք համարձակ ըսել բէ Պեշխոյ համար բարիք մը, եւ մեր ժամանակին համար հարկ եւ կարօտութիւն մը դարձեր է : Իր մասնաւոր յատկութիւնն այս է որ բոլորովին անկախ է բէ տէրութեան մարդ-

կանց եւ քէ Եկեղեցականաց իշխանութենէն, եւ ինքզինքր առած ե գիտութեան, եւ միայն գիտութեան... Մեր աշակերտները պատանին, եւ այս պատանիները ձեռքերէն կ'առնեն ինչ միակ մարդիկ պիտի լըլան : Մենք զիրենք այնպէս կը պատրաստենք որ մարդկային ընկերութեան մէջ պատուաւոր տեղ մը բռնեն. պետք է որ լուսատուրենք զիրենք, եւ ոչ քէ գոցենք աջքերին լուսոյ դէմ. պետք է որ ճանչեան քէ ընկերութեան մէջ իրենց չորս դին տեսածին լարքի ե քէ չար, պանկուն է քէ վերցընելու. որպէս զի Համալսարանէն կ'առնեն սրտերնու յոծարութիւնները չարշէն շտանին զիրենք, փաղաքուշ խօսքերը չխտեն, մտածածին զիտերը ամեն ալ աղէկ բաներ են կամ ընկերական վիճակին լաւնալուն համար եղած որ եւ իցէ փափաքները գէշ բաներ են ըսողները ջնջուցընեն :

« Պետք է որ կարող ըլլան ստոյգ տեղեկութեամբ դատաստան ընել քէ հիմակուան եւ քէ անցնալ օրինաց եւ կառավարութեանց վրայ, եւ այնպէս հայրենեաց պիտանի քաղաքացիք ըլլան, մտաց համոզման կողմանէ ինչ դրօշակի տակ ալ գտնուի :

« Ինչ որ մենք կրենք մէշերնիս, մեր հակառակորդներն ալ իրենց մէջ կրեն. բայց մեր հաւնածին իրենք չեն հաւնիր, մեր ջհաւնածին իրենք կրնանին :

« Վիճարանութեամբ ճշմարտութիւնը դուրս կըլատարք, ուստի մեր դատարաններուն մէջ վիճարանիք հանդարտութեամբ. վասն զի ուր որ վիճարանելու հրաման չկայ՝ ուժն է տիրողը. լաւ է վիճարանել քան քէ բռնութիւն ընել :

« Վիճարանութիւնը աշխարհաւոր յեղափոխութեան շարքարգիկն է : Անով փորձիկը կընտանայ, կըտկարանայ, կըկառավարուի, ու մարդկային ընկերութեան շէնքը կըլպանալուի : Ազատօրէն վիճարանող ժողովուրդը՝ կեանք ու յառաջադիմութիւն ունի. որ ժողովուրդն որ վիճաբանի չունի՝ մոռնուլու վրայ է, կամ քէ մութ տեղ պահուլուած՝ առիթի մը կըսպասէ որ հարուածը իջեցնէ... :

« Կարելի բան չէր որ հոռովմական եպիսկոպոսաց կողմանէ մեր ընթացքն ու սկզբունքները չլրատապարտուին. եւ ասոր դէմ զանգատելու ամենեւին միտք չունինք. վասն զի գիտենք որ ամեն մարդ ալ իրաւունք ունի մեր վարդապետութիւնը քննելու, մեր կարծիքներուն դէմ խօսելու, եւ ապահով ենք որ մեր հակառակորդաց

կըլաղքենք որ եւ իցէ հանդիսաւոր կողմոյ մէջ մեր երկրին ողջամիտ մարդիկը դատաւոր բռնելով : Բայց որովհետեւ կոխը անոնք բացին, հիմակուրեն կընարցընենք մենք այն մեր ռիսքիմ բշեամիներուն քէ ինչ իրաւամբ մտքերնիս դիր են քէ ճշմարտութիւնը իրենց քովն է միայն :

« Զեր ունեցածը Եկեղեցւոյ մը (այսինքն հոռովմական Եկեղեցւոյ) ճշմարտութիւն է միայն՝ կըսենք անոնց, եւ մենք չենք արգիլեր ձեզի անիկայ սովորցընելը, չենք արգիլեր մեր աշակերտաց՝ անոր հաւատալն ու պատուերները կատարելը :

« Զեր ունեցածը՝ միայն Եկեղեցւոյ մը ճշմարտութիւն է՝ կըսենք անոնց. ինչ է այդ ամբարտաւանութիւնն որ ամենայն ճշմարտութիւն ալ մեր քովն է կըսենք : Ոչ ոչ, ամեն տեսակ ճշմարտութիւն ալ ձեր քովը չէ :

« Պատմական ճշմարտութիւնը ձեր քովը չէ, եւ դուք չէք սովորցընել. վասն զի ձեզի պարտք համարեն էք պատմութիւնը խարդախել՝ որպէս զի Եկեղեցականաց փառասիրութեան գործիք եղած չարիքները անմեղադիր ընէք :

« Բարոյական ճշմարտութիւնը ձեր քովը չէ, եւ դուք չէք սովորցընել որ զայն, վասն զի բարոյականին առաջին օրէնքը սեր է, ներողամտութիւն է. եւ սակայն Լատերանու շորքող ժողովը՝ նախագահութեամբ Ինտիկնետիոս Գ պապին՝ կըսանման քէ Հերետիկոսաց դէմ հալածանք հանելը ոչ միայն իրաւունք՝ այլ եւ պարտք է, « եւ անկարելի է որ միւր լաւ կարգիլ ըլլայ, երբոր « հոռովմական Եկեղեցւոյ այս առածին չնտնի : »

« Ուսումնական ճշմարտութիւնը ձեր քովը չէ ու դուք չէք սովորցընել, վասն զի ձեր Եկեղեցւոյն գիտութեանքներով Կոպերնիկոսի դրօշակը դատապարտուեցաւ, եւ անոր հետեւող Գալիլէոսը հալածանք քաշեց :

« Բաղադրական ճշմարտութիւնը ձեր քովը չէ ու չէք սովորցընել. վասն զի Գրիգոր ԺՁ պապին կոնդակը դատապարտեց Պելճիոյ այն Սահմանադրութիւնն որ բոլոր Եւրոպա կըզմայի վրան ու կընախանծի, վկայելով որ միեւնի հիմա տեսնուած Սահմանադրութեանց մէջ ամենեւին խելացին՝ ամենեւն արդարն է :

« Պարոններ, իրաւ է որ կըխոստովանինք մենք քէ եպիսկոպոսները իրաւունք ունին իրենց վարդապետութիւնը ուզածնուն պէս կարգաւորելու, եւ մերինը արձակ համարձակ պարտաւելու. բայց չենք կրնար ամենեւին ըսել քէ իրաւունք

ուելին մեր երկրին հիմնական օրինաց դէմ սպառնալիք ընելու, եւ իրենց նկեղեցին Տերութենէն վեր դնելու... : Հոռովմեական նկեղեցին ոչ միայն դաւանեց մը՝ այլ եւ քաղաքական կուսակցութիւն մը դարձեր է, որ Տերութեան վրայ յարձակում կընէ, եւ միտքը դրած է քէ մարդկային ընկերութեան երջանկութիւն այն աստեւ պիտի ըլլայ՝ երբ որ Հոռովմայ հոգեւորական կառավարութեան բացարձակ իշխանութեանը տակ մտնայ :

« Յաղորած ատենը ազատութիւն կը պահանջէ ամենուի՝ իբրեւ իրաւունք. բայց ազատութիւնը ձեռք ձգելուն պէս՝ իրեն կուգէ պահել զայն՝ իբրեւ արտօնութիւն... Կրնայ մէկը ըսել քէ այն նպիսկապոսները իրենց դրութիւնը մինչեւ ծայրը տանելու չեն համարձակիր : Բայց երկու տեսակ համարձակութիւն կայ. մէկը անկեղծ ու յայտնի, մէկը կեղծ ու ծածուկ : Նքէ բացէն եւ ուղղակի յարձընէին Սահմանադրութեան վրայ, ժողովուրդը կրկնադէպ՝ դէմ կ'ըլլէ իրենց. իսկ պտոյտ ճամբով մը եղած յարձակումը, այն ալ

կրօնի պատրուակաւ, այնչափ կ'անկամանաց տեղի չի տար, եւ միշտ կրնայ ուրացուիլ : Եւ անա այսպիսի կըճանչնանք սեպտեմբերի Տիեռ 18ին եղած հովուական նամակները... :

« Մէկ բան մըն ալ ըսենք ու վերջացնենք խօսքերնիս. ճիլ երկտասարդ ունկնդիրք իմ, հայրենեաց յոյս դուք էք. ձեզի պիտի մնայ օր մը այն մեծամեծ սկզբունքներուն աւանդն որ հարքն մեր ժառանգութեան մը պէս բողբը են մեզի. լաւ նայեցէք. դուք հիմա երկու քշնամի ունիք վախնալու, մէկը ուրիշներուն հրապուրանքը, միւսն ալ ձեր չափազանց տաքութիւնը :

« Առաջ տարեք ուսմունքնիդ այնու հետեւարտութեամբ որ մտաւոր աշխատութեանց համար հարկաւոր են. նայեցէք որ այտուհետեւ ալ ձեր անարատ վարմունքովը բարի օրինակ ըլլաք ուրիշներուն : Համալսարանին դրօշակը՝ ազատութեան, գիտութեան ու բարեկարգութեան դրօշակն է, եւ այս իր երեք գոյներովը պիտի ծածանի յաւիտեան : »

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՎՐԱՅ.

Պարսկաստանի մերագնեայց այժմու վիճակին վրայ գեղեցիկ տեղեկութիւն մը կը գտնենք ռուս ճանապարհորդի մը գրութիւններուն մէջ, որ է Պ. Պերժէ՝ ազգաւ՝ զաղղիացին. ասիկայ Յաւելուած մը յօրինելու ու տպելու է ռուսերէն ի Տիփլիսի՝ Պ. Տիւրքիէին « Հայկազունք ինքնատասնեորդի դարուս » վերնագրով գրութիւնն ռուս բարգմանութեանը հետ. եւ այս է ըսածը .

« Այժմու Հայոց վրայ գրութեան գերագանց յօդուածին հեղեակը (Պ. Տիւրքիէ)՝ վերջի տողերուն մէջ կը խոստովանի որ Պարսկաստանի մէջ Զուլայ քաղաքին կամ Ասպահանայ Զուլայ արուարձանին բնակիչ Հայոց վրայ բաւական ամբողջ տեղեկութիւն չունի եղեր : Յիշուի ալ դժուար բան է որ ամէն մարդ, մանաւանդ ով որ Պարսկաստան չէ գնացեր, մանրամասն տեղեկութիւն ունենայ այն գաղափարաց վրայ որ Հայոց ազգին կեդրոնական գլխաւոր տեղերէն

հետու՝ մահմետական օտար երկիրներ ընկածի պէս են : Զուլայի մէջ մէկ օրագիր մըն ալ չկայ, — ինչպէս որ առատապէս կը գտնուին Հայոց ուրիշ կեդրոնական տեղերը, — որ կարող ըլլայ հետաքրքիր անձանց տեղեկութիւն տալ ջուղայեցի Հայոց վիճակին վրայ : Թող որ ջուղայեցի Հայերը, որ ատենով շատ ծաղկած էին բարեկեցութեամբ ու հրօտութեամբ, հիմա կարողութիւն ալ չունին իրենց նահանգէն դուրս ճամբորդութիւններ ընելու եւ անով իրենց գիրքեք ճանչցնելու ուրիշ համագգի եղբարց : Այս ալ կայ որ քիչ անգամ ճամբորդութիւն կըլլայ դէպ ի Զուլայ, եւ այն գրեթէ դիպումով. որով Հայոց ազգին ջուղայեցի ճիւղը մասնաւոր ժողովուրդ մը դարձած ու գրեթէ մոռցուած է, եւ Պ. Տիւրքիէի պէս գիտուններուն անգամ անձանօք է՝ որ Հայոց ազգին վրայ հետազօտութիւններ ընելու տուել են իրենք գիրքեք : Միանգամայն ցաւալի բան